

Փ ի պ ե ռ ք ո լ ի ն

Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա ն գ լ ե ռ ե ն - հ ա յ ե ռ ե ն - ա ն գ լ ե ռ ե ն

Peter Collin

Dictionary of Law

English - Armenian - English



Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2005

Բառարանի հրատարակությանը սատարել են Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամը, Հայաստան և «Նեքստ փեյջ» հիմնադրամը, Սոֆիա, Բուլղարիա

This publication was supported by a grant from the OSI Assistance Foundation, Armenia and Next Page Foundation, Sofia, Bulgaria

P. Collin
Dictionary of Law

Փ. Քոլին

Իրավաբանության բացատրական բառարան. անգլերեն-հայերեն-անգլերեն

Եր.: Գիտանք, 2005. - 336 էջ.

Բառարանը Մեծ Բրիտանիայի հանրահայտ բառարանագետ Փիտեր Քոլինի համանուն բառարանի թարգմանությունն է: Պարունակում է մոտ 11.000 անգլերեն և 8500 հայերեն բառ ու բառակապակցություն: Ըստ «մեկ գրքում՝ երեք բառարան» սկզբունքի՝ կարող է օգտագործվել որպես անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն և ուղղակի հայերեն-հայերեն բացատրական բառարան:

Բառարանում առաջարկված են բազմաթիվ հայերեն նոր եզրեր՝ իրավաբանության, ինչպես նաև առնչվող բնագավառներից:

Նախատեսված է համալսարանների և այլ կրթական հաստատությունների՝ իրավաբանության, քաղաքագիտության, կառավարման և այլ հարակից մասնագիտությունների ուսանողների ու դասախոսների, դատավորների, փաստաբանների, իրավական համակարգի այլ աշխատողների, թարգմանիչների, ինչպես նաև լայն հանրության համար:

ISBN 99930-963-6-9

Third edition published 2000, reprinted 2001, 2002 by Peter Collin Publishing Ltd

The Translation is published by arrangement with Bloomsbury Publishing Plc. The moral rights of the author have been asserted.

© Copyright P. H. Collin 1986, 1992, 2000

© Գիտանք, հայերեն թարգմանության համար, 2005

A

A լյ անգլերեն այբուբենի առաջին տարը
**category 'A' prisoner 1-ին կարգի բանտարկ-
 յալ** բանտարկյալ, որը փախուստի դեպքում
 վտանգ է ներկայացնում հասարակության համար
Schedule A 1-ին սանդղակ ↔ ibid

Table A 1-ին տեսակ ↔ ibid

a fortiori լատ. առավել ևս

a posteriori լատ. փորձից ստացված

**a posteriori argument փորձից ստացված փաս-
 տարկ**

a priori լատ. 1. ի սկզբանե. 2. մինչև փորձը

**a priori argument մինչև փորձը ստացված փաս-
 տարկ** դատողություն, որը հիմնված է գաղափար-
 ների կամ ենթադրությունների, այլ ոչ թե իրական
 դեպքերի վրա

'A' share 1-ին կարգի բաժնետոմս սովորական
 բաժնետոմս՝ քվեի սահմանափակ իրավունքով

A1 գերազանց

**ship which is A1 at Lloyd's Register նավ, որն
 ըստ Լոյդի մատյանի՝ գերազանց վիճակում է**

ab initio լատ. ի սկզբանե, սկզբից նեթ

**A.B.A. Ամերիկայի իրավաբանների ընկերակ-
 ցություն** ↔ American Bar Association

abandon 1. հրաժարվել ձեռք քաշել, չչարունա-
 կել, 2. **քել** թողնել ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին:

Մինչև երկու տարեկան երեխային լքելը *արձա-
 նագրվող իրավախախտում է* ▲ *notifiable offence*

to abandon an action հրաժարվել հայցից

abandonment 1. հրաժարում կամավոր հրաժա-
 րում ինչ-որ բանից, օրինակ՝ գույքի նկատմամբ
 տիրության իրավունքից, 2. **լքում**

abandonment of a claim հրաժարում հայցից

**abate 1. պակասեցնել (ժառանգությունը), 2.
 դադարեցնել** նվազեցնել անհանգստության
 պատճառումը, 3. **պակասեցնել** քչացնել ժառան-
 գությունը, քանի որ ունեցվածքում բավարար
 գումար չկա ժառանգությունը ամբողջությամբ
 վճարելու համար

abatement 1. դադարեցում անհանգստության
 պատճառման վերացում, 2. **ժառանգության նվա-
 ճում** ժառանգության այնպիսի նվաճում, որը հնա-
 րավորություն չի տալիս ամբողջությամբ կատարել
 կտակը

noise abatement աղմուկի վերացում աղմուկոհի
 ստիպելը, որ դադարեցնի աղմուկը

tax abatement հարկի նվաճեցում

abator վնասագերծող վնասի պատճառումը դա-
 դարեցնող անձ

abduct առևանգել բռնի կերպով տանել որևէ ան-
 ծի, հատկապես՝ կնոջ կամ երեխայի

abduction առևանգում անձի, հատկապես՝ կնոջ
 կամ երեխայի, բռնի կերպով տանելու *արձա-
 նագրվող իրավախախտում*

abductor առևանգիչ առևանգում կատարող անձ

abet դրդել հրահրել հանցագործություն կատարել
aiding and abetting օժանդակում և դրդում ↔
 ibid

abeyance 1. չկիրարկում. 2. անտերություն իրա-
 վիճակ, երբ հողը տեղ չունի
**this law is in abeyance այս օրենքը ներկա-
 յունս չի կիրարկվում**

ABH մարմնական վնասվածք ↔ actual bodily
 harm

abide by ենթարկվել (օրենքին կամ կանոնին)

abjuration երդմամբ հրաժարում

abjure ՍՄՆ երդմամբ հրաժարվել (այլ երկրի
 հպատակությունից)

abnormal ոչ սովորական, ոչ բնականոն

abode բնակության վայր

right of abode բնակվելու իրավունք (երկրում)

abolish վերացնել դադարեցնել գործողությունը
 (օրենքի կամ կանոնի)

abolition վերացում վերացման գործողություն

abortion վիժեցում հղիության արհեստական դա-
 դարեցում մինչև բնական ժամկետը: Ապօրինի վի-
 ժեցումը *արժանագրվող իրավախախտում է*

abrogate չեղարկել անվավեր ճանաչել օրենքը
 կամ համաձայնագիրը

abrogation չեղարկում (օրենքի կամ համաձայ-
 նագրի)

abscond թաքնվել արդարադատությունից չներ-
 կայանալ դատարան գրավով ազատվելուց հետո,
 2. փախչել բանտից

absence բացակայություն

**in the absence of բացակայության պարագա-
 յում** (անձի)

**leave of absence բացակայության թույլտվու-
 յուն** ↔ ibid ▲ *in absentia*

absent բացակա

**absent without leave (AWOL) ինքնակամ բացա-
 կայություն** (զինված ուժերում) բացակայություն
 ծառայությունից՝ առանց վերադաս սպայի
 թույլտվության

absentee բացակա անձ անձ, որը բացակա է
 հանդիպմանը կամ դատավարությանը

absolute բացարձակ

absolute discharge պատժից ազատում (դատա-
 պարտյալի)

**absolute monopoly վաճառքի բացարձակ մե-
 նաշնորհ, բացարձակ մենավաճառ** իրավիճակ,
 երբ ինչ-որ ապրանք արտադրվում (մատակա-
 րարվում) է միայն մեկ արտադրողի (մատակարա-
 րի) կողմից

absolute privilege բացարձակ արտոնություն
 արտոնություն, որն անձին պաշտպանում է
 զրպարտանքի մեղադրանքից կամ հայցից (եւրոյթ
 ունեցող խորհրդարանականին՝ Համայնքների
 ստյանում կամ հայտարարություն անող դատա-
 վորին՝ դատավարության ընթացքում)

absolute title 1. տիրության բացարձակ իրավա-

հիմք հողատարածքի տիրույթյան իրավահիմք, որն երաշխավորված է հողատարածքի գրանցման գրասենյակում հաշվառմամբ, **2. տնօրինման բացարձակ իրավահիմք** հողատարածքի տնօրինման իրավահիմք, որն երաշխավորված է հողատարածքի հաշվառմամբ գրանցման գրասենյակում

absolutism միահեծանություն 1. քաղաքական տեսություն, ըստ որի՝ ամեն մի օրինական կառավարություն պետք է ունենա անսահմանափակ իշխանություն, **2.** կառավարման համակարգ, որտեղ կառավարությունն ունի անսահմանափակ իշխանություն

absolutist 1. ած. միահեծան, 2. միահեծանական միահեծանության կողմնակից

abstain ձեռնպահ մնալ չմասնակցել ինչ-որ բան անելուն, հատկապես՝ չքվեարկել

abstention ձեռնպահ մնալը 1. խուսափում ինչ-որ բան անելուց, **2. ԱՄՆ** իրավիճակ, երբ դաշնային դատարանը հրաժարվում է գործի վարույթից և դա հանձնում է նահանգի դատարանին, որն այդպիսով իրավասություն է ստանում որոշում կայացնել առաջացած դաշնային սահմանադրական հարցերի վերաբերյալ

abstract ամփոփագիր գեկույցի կամ փաստաթղթի համառոտ շարադրում

abuse 1. չարաշահում ինչ-որ բանի սխալ կիրառում, **2. վիրավորանք ա)** կոպիտ բառեր կամ հայտույթներ, **բ)** դաժան վերաբերմունք անձի նկատմամբ (սովորաբար սեռական առումով), **3. չարաշահել, 4. վիրավորել**
drag abuse թնրադեղի չարաշահում հոգեկան ու մարմնական կախվածություն կանոնավոր կերպով թնրադեղ ընդունելուց

to abuse one's authority իրավագործությունը չարաշահել իրավագործությունը կիրառել ապօրինի կամ վնասահարույց ձևով

abuse of power իշխանության չարաշահում օրինական իշխանության կիրառումը ապօրինի ձևով կամ վնաս պատճառելով

abuse of process դատավարության չարաշահում հայցի հարուցում չարամիտ կամ անբարեխիղճ նպատակով կամ առանց հիմքի

abut (on) սահմանակցել (հողատարածքի մասին) սահմանակից լինել մի այլ հողատարածքի

ACAS հաշտեցման և իրավարարման խորհրդատու ծառայություն ↔ Advisory Conciliation and Arbitration Service

ACC (Assistant Chief Constable) ոստիկանապետի օգնական ոստիկանության ավագ սպա ♣ police

accept 1. ընդունել վերցնել առաջարկվածը, **2. համաձայնել**
to accept an offer conditionally առաջարկությունն ընդունել պայմանականորեն

acceptable ընդունելի

acceptance 1. ընդունում պարտավորագիր կնքելու հիմնական պայմաններից մեկը, երբ մի կողմն ընդունում է մյուսի առաջարկությունը, **2. հոժարագրում** փոխանցելի մուրհակի ստորագրում՝ ի նշան այն վճարելու համաձայնության
we have his letter of acceptance ստացել ենք նրա՝ առաջարկությունն ընդունելու գրավոր համաձայնությունը

acceptance of an offer առաջարկության ընդունում համաձայնություն առաջարկությանը, հետևաբար՝ պարտավորագրի ընդունում

accepting house հոժարագրատուն ձեռնարկություն, որը միջնորդավճարի դիմաց հոժարագրում է փոխանցելի մուրհակները (այսինքն՝ խոստանում է վճարել դրանք)

acceptor ընդունող առաջարկություն ընդունող անձը

access 1. մուտքի իրավունք հողատարածքի տիրոջ իրավունքը՝ օգտագործելու սահմանակից հանրային ծանապարհը, **2. տեսակցության իրավունք** երեխայի՝ իր ծնողների կանոնավոր կերպով հանդիպելու իրավունք, կամ ծնողի, տատի ու պապի՝ երեխային տեսակցելու իրավունք, երբ երեխան գտնվում է ուրիշի խնամքի տակ, **3. մատչելիություն** համակարգչի տվյալներն ստանալու հնարավորություն

right of access to a solicitor ԵՄ փաստաբանի հետ հանդիպելու իրավունք ոստիկանությունում կալանքի տակ գտնվող անձի իրավունքը՝ առանձին հանդիպելու փաստաբանի հետ՝ նրանից խորհուրդ հարցնելու նպատակով

to gain access to something 1. ինչ-որ բանի հասնել, 2. ինչ-որ բան ստանալ
to have access to something ինչ-որ բանի հասնելու հնարավորություն ունենալ, 2. ինչ-որ բան ստանալու հնարավորություն ունենալ

accession 1. միացում, 2. դիրքի գրավում
Treaty of Accession Միացման համաձայնագիր ՄԹ-ի՝ Եվրամիությանը միանալու համաձայնագիրը

accession to the throne գահ բարձրանալ դառնալ թագավոր (թագուհի)

accessory հանցակից անձ, որն օգնում կամ խորհուրդ է տալիս հանցագործին

accessory after the fact հանցագործության պարտակիչ անձ, որը հանցագործին աջակցում է հանցագործություն կատարելուց հետո

accessory before the fact հանցակից անձ, որը հանցագործին աջակցում է հանցագործություն կատարելուց առաջ

accident պատահար պատահաբար տեղի ունեցած դժբախտ իրադարձություն, օրինակ՝ օդանավի վթար
industrial accident արտադրական պատահար

դժբախտ պատահար աշխատանքի վայրում
accident insurance պատահարի ապահովագրում ապահովագրում, որը վճարվում է պատահարի դեպքում

accommodation 1. կարճաժամկետ փոխառություն կարճ ժամանակով փոխ տրված փող, **2. համաձայնություն**

to reach an accommodation with creditors համաձայնության գալ վարկատուների հետ համաձայնեցնել վարկի մարման պայմանները

accommodation address հաղորդակցման հասցե հասցե, որն օգտագործվում է հաղորդագրություններ ստանալու համար, բայց որն ընկերության փաստացի հասցեն չէ

accommodation bill փոխառության մուրհակ փոխանցելի մուրհակ, որն ստորագրելով մուրհակապանը մի այլ ընկերությանն (մուրհակատիրոջը) օգնում է փոխառություն ստանալ: Տրվում է փոխառուին հասանելի առևտրի պարտքերի դիմաց

accommodation maker փոխառություն կազմակերպող անձ, որն անվճար ստորագրում է հասարակ մուրհակը, սակայն մտադիր է պարտք տալ վարկատուի փողը

accomplice հանցակից անձ, որը հանցագործության մասնակից է կամ օգնում է հանցագործություն կատարել

accord and satisfaction համաձայնություն և բավարարում 1. պարտքի (մասնակի) մարում պարտապանի կողմից, **2. պարտապանի կողմից** որևէ գործողության կատարում կամ ծառայության մատուցում, որը պարտատիրոջ կողմից ընդունվում է որպես պարտքի լրիվ մարում

accordance 1. համաձայնություն, 2. համապատասխանություն

in accordance with 1. ըստ, 2. համաձայն, 3. համապատասխան

according to 1. ըստ, 2. համաձայն, 3. համապատասխան

accordingly համապատասխանաբար

account 1. հաշիվ ապրանքագիր վճարված կամ պարտքով վերցված փողի գրանցում, **2. ապահիվ հաշիվ** պայմանավորվածություն, ըստ որի՝ հիմնախորը խանութից ձեռք է բերում ապրանքներ, պարտքը գրանցվում է հաշվին և վճարվում ավելի ուշ (տվորաբար ամսվա վերջին), **3. հաշվետեր** հաճախորդ, որը ձեռնարկության հետ կառնաբար մեծ գումարի գործարքներ է կատարում և այնտեղ ունի վարկի հաշիվ, **4. առևտրաշրջան** արժեթղթի սակարանում ժամանակահատված, որի ընթացքում բաժնետոմսերը վաճառվում են ապառիկ և որի վերջում պետք է վճարել գնված բաժնետոմսերի դիմաց, **5. հաշվի առնել**

a company's accounts ընկերության հաշիվներ ընկերության փողի գործարքների մանրամասն

գրանցումները

action for an account պարտքը որոշելու հայց կողմերի միջև պարտքի չափի որոշումը դատարանով

bank account դրամատան հաշիվ դրամատանը փող պահելու ձև

banking account ՄՄՆ դրամատան հաշիվ ↔ bank account

the accounts of a business ձեռնարկության հաշիվներ ↔ a company's accounts

to account for հաշվետու լինել գրանցել փողի գործարքը կամ հաշվետու լինել դրա համար

to take account of the age of the accused when passing sentence դատավճիռ կայացնել՝ հաշվի առնելով մեղադրյալի տարիքը դատավճիռ կայացնել՝ հաշվի առնելով մեղադրյալի ծեր կամ դեռահաս լինելը

accountability հաշվետվականություն լինել հաշվետու կամ պատասխանատու

accountable ած. հաշվետու անձ, որը պարտավոր է բացատրել, թե ինչ է կատարվել և ով է պատասխանատու ինչ-որ բանի համար

accounts payable վճարելի հաշիվներ վարկատուներին վճարման ենթակա փող

accounts receivable ստանալի հաշիվներ պարտապաններից ստանալի փող

accountant հաշվապահ անձ, որը վարում է ընկերության հաշիվները և կարգի բերում հաշվապահության համակարգը

chartered accountant արտոնագրված հաշվապահ ↔ ibid

accounting հաշվապահություն ձեռնարկության հաշիվների պատրաստում

false accounting կեղծ հաշվապահություն դրամանիջոցների շարժի գրանցումը փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու՝ արձանագրվող իրավախախտում

accretion հողատարածքի աճ հողատարածքի բնական ավելացում, օրինակ՝ երբ փոխվում է գետի հունը

accrual վրձ դանդաղ աճ աստիճանաբար ավելացնելու միջոցով

accrual of interest շահի վրձ շահի ինքնաշխատ գումարումը հիմնագումարին

accrue վրձնել աճել և վճարման ենթակա լինել ավելի ուշ (շահի կամ շահութաբաժնի մասին)

accumulate կուտակվել աճել ավելանալու միջոցով

accuse մեղադրել, անբաստանել պնդել, որ անձը հանցագործություն է կատարել կամ նրան մեղադրանք ներկայացնել

the accused մեղադրյալ, մեղադրյալներ

accusation մեղադրանք, անբաստանություն մեղադրման գործողություն

accusatorial procedure մեղադրման ընթացակարգ ընթացակարգ (նախադեպի օրենսդրություն)